

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ 106-ԱՄՅԱԿԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ 106 ԱՆԴԱՄՈԿ

07.12.2024 12:30



Դեկտեմբերի 6-ին փաստաբանական համայնքը տոնեց մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության հիմնադրման 106-ամյակը: Միջոցառումը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրհներգով: Այնուհետև, հանդիսատեսը դիտեց հոլովակ, որում հակիրճ ամփոփված էր Հայաստանում փաստաբանության հիմնադրման և զարգացման պատմությունը: Ողջունի խոսքով հանդես եկան Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանական ակադեմիայի ղեկավար Արա Զոհրաբյանը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ նաև Փաստաբանների պալատի արտոնագրերի շնորհման խորհրդի հանդիսավոր նիստ: Նիստի մեկնարկին շնորհավորական ուղերձներով ամբիոնից ելույթ ունեցան նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Մարինե Ֆարմանյանը, Գայանե Դեմիրջյանը և Կարեն Մեժլումյանը: Շնորհակալական խոսքով հանդես եկան նաև հավակնորդներ Աննա Ստեփանյանը և Ապրես Գրիգորյանը: Փաստաբանության 106-ամյակին, Փաստաբանների պալատի խորհրդի առաջ հանդիսավոր երդումից հետո, հավակնորդները ստացան փաստաբանական գործունեության արտոնագրեր: Խորհրդանշական զուգադիպությամբ Փաստաբանների պալատը համալրվեց ևս 106 անդամով: Փաստաբանների պալատի նախագահի կողմից պատվոգրերով և շնորհակալագրերով պարգևատրվեցին մի շարք գործընկերներ՝ փաստաբանության առջև ծառայած խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանն ուղղված միջոցառումներին օժանդակելու, ինստիտուտի պաշտպանությանը նպաստելու, մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և հանրային պաշտպանությանն օժանդակելու համար: Երեկոյի մշակութային հատվածը ներառում էր երաժշտական կատարումներ, որի ընթացքում ելույթ ունեցավ նաև երգիչ Վահագ Ռաշո:

